

նամե՞ծ մխիթարութիւնն է. այնպէս որ վայթէր Սկովտի պէս յոռետեսներու խօսքերն կը ճըշմարտէր, եթէ մարդս անցածն մոռնալու եւ ապագային յուսալու կարողութիւն չունենար: Այսպէս ըրին եւ Տիւզեանք: 1822ին Ապտիւլ Մէճիտ արքայորդոյն ծննդեան օրը՝ Տիւզեանց երկու քոյրերն Սուլթանին մարդասիրական զգածմանցը գիմեղով՝ կրցան հրաման առնուլ, որ իրենց երկու եղբարքն, որ յօտարութեան կը թափառէին, վերստին ի Վ. Պոլիս դառնան: Եւ այսպէս Վարապետ Պէյ եւ Յակոբ Չէլէպի Ապրիլ 22ին յօտարութեան դեգերելու ծանր հարկէն ազատ եղան:

Քիչ ետքը տեսնուեցաւ՝ որ Օսմանեան Պետութեան վեհափառ Սուլթանք շուտով չեն փոխեր իրենց հաւատարիմ ծառայից վրայ ունեցած վստահութիւնն: Յամին 1833, Գեկտեմբեր 22ին առանձինն հրովարտակաւ Յակոբ Չէլէպի Տիւզեան՝ փողերանոցի գլուխ կարգեցաւ, որ պատմութեանս խոռվալից ալէկոծութենէն հանելով զմեզ՝ խաղաղ վայրերու կ'առաջնորդէ: